

է ներս. Դպրոց : Ուսանելով մինչեւ 1875 թ., այդ տարին արձակուամ է Դպրանոցից իբրեւ աղմկարար միեւնոյն ժամանակ զրկուելով այն բարերարութիւնից, որ խոստացել էր Հոգաբարձութիւնը՝ Էֆէնդեանի հաշուով Դերմանիա ուղարկել : Թողնելով Դպրանոցը նախ սկսում է ծառայել Էնֆիաճեանցի գրախանութում իսկ յետոյ Մուշեղ քահ. Տէր Ղեւոնդեանցը 1876 թ. ուղարկում է Գանձակի գաւառի Գետաշէն գիւղ իբրեւ ուսուցիչ : Երկու տարուց յետոյ թողնում է այս պաշտօնն էլ եւ գիւղ քաշւում, իսկ 1879 թ. նշանակւում Զաքարթալա աւանում ուսուցիչ, ուր մնացել է մինչեւ 1881 թ., իսկ 81-12 թ. Նուխի : Այս վերջին երկու քաղաքներում պատրաստուելով ուսերէնից, գալիս է Տըփսիս եւ մտնում ուսաց Աղէքսանդրեան ուսուցչական ինստիտուտ, որ աւարտել է 1886 թ. :

Գրական գործնէութիւնը սկսում է Զաքարթալայից՝ թարգմանելով «Բնախօսութիւն» գիրքը (տպ. 1881 թ.), որտեղից եւ ուղարկում է ա. յօդուածը «Մեղու-Հայաստանի» օրաթերթին (տպ. 1881 թ. մայիսի 22) : Այնուհետեւ շարունակաբար գրել է «Մեղու»ի մէջ եւ յետոյ «Նոր-Դարում» : 1886 թ. գնում է Մօզդոկ ուսուցչի պաշտօնով եւ այդտեղից առաջին անգամ սկսում է գրել գիւղական կեանքից : Առաջին գործն է «Մուսինի գանգաւը» : Գլխաւորապէս սորա գրական գործնէութիւնը յօդուածներն են, որոնք յաջող են եւ սրամիտ : 1889 թ. Տփլիսում, 90-91 թ. Զալալ-Օղլի, 91-92 Հայոց Ախալքալաքում, իսկ 92-96 թ. դարձեալ Տփլիսում է ուսուցչութիւն արել : Հայոց ուսումնարանների փակումից յետոյ 1897 թ. քաշուեցաւ գիւղ, իսկ վերջերս մի առժամանակ ծառայեց «Նոր-Դար»ի խմբագրատան կազմելով «Մամուլի շուրջ»ը եւ շարունակաբար յօդուածներ տալով ստորագրութեամբ եւ անստորագիր : 1901-902 թ. ճեմարանական տարւայ համար հրաւիրուեցաւ երեւանի Թեմական Դպրանոց ուսուցիչ, որտեղ եւ մնում է ցարդ :


ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

## ՍՈՓՈՆ ՊԷԶԻՐՃԵԱՆ

Ուրախութեամբ կ'իմանանք որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Էջմիածնայ վանքը զարդանկարել տալու նպատակով՝ մասնաւոր նամակով մը հրաւիրած է բարիդարձակ հայ տաղանդաւոր զարդանկարիչ Սոփոն Պէզիրճեանը :

Որքան որ ալ ամէն արուեստասէր հայրենակիցներու ծանօթ է պ. Պէզիրճեան, այնու հանդերձ շահեկան կը համարենք այս առթիւ մեր կողմանէ մէկ երկու խօսք ընել ահոր նկարագրի, գործունէութեան եւ ընդգրկած մասնաճիւղին տուած ընդարձակութեան մասին :





Ս. ԷՋՄԻԱՍԹԻՆ



Ս. Պէղիրճեան արուեստագէտ մ'ըլլալէ առաջ ճշմարիտ հայու օրինակելի տիպար մ'եղած է եւ անձնուէր անդամ մարդկութեան : Իր օրերդն ու մանչ զաւակը իր հոգևովը կրթելէ ու դաստիարակելէ զառ , որոնք այսօր հրապարակի վրայ կը ճանչցուին իբրեւ արուեստագէտներ եւ կը վարեն պատուաւոր պաշտօններ օտարազգի շրջաններու մէջ , չէ մոռցած իր կարողութեան չափովը նիւթապէս եւ բարոյապէս մասնակցիլ մարդասիրական բազմաթիւ ձեռնարկներու , քաջալերել ու խրախուսել ուսանողները :

Ծերունի արուեստագէտը նուազ ծանօթ չէ նաեւ Եւրոպայի գեղարուեստից աշխարհին : Եւրոպական բազմաթիւ գեղարուեստական հանդէսներու մէջ երեւցած են անոր աշխատութեան նմոյշները , որոնք փրէտէրիք Լէյթնի եւ Ժէոմի նման համբաւաւոր նկարիչներէ եւ ասոնց նման շատերէ գնահատուած են :

Անխոնջ աշխատասէր մը եղած է միշտ պ. Պէղիրճեան : Իր ամէն բնավայրի մէջ ձգած է գեղարուեստի նշանաւոր հետքեր : Կ. Պօլսոյ արքունական պալատներու մէջ անոր զարդանկարչական ճաշակի նրբութիւնը գրեթէ միշտ ընկերացած է նշանաւոր ճարտարապետներու հանձարին : 1900-ի Աշխարհահանդէսի ժամանակ օսմանեան տաղաւարին կարեւոր մասը՝ անոր մտքի արտադրութիւնն եղած է :


Ինչքան ալ որ պ. Պէղիրճեան skfounapikon մը միայն ճանչցուած է մեր մէջ , բայց անոր նպատակն եւ ուղղութիւնը լոկ շէնքերու զարդարման մէջ չեն եղած բնաւ . անդուսպ ձգտումն ունեցած է արուեստը արհեստին հետ հաշտեցնելու , զարդանկարչութեան մէջ ամփոփելու ասեղնագործութեան , կահագործութեան եւն . ձեւերու ճոխութիւնն , արեւելեան եւ արեւմտեան ճաշակաւոր համադրութեամբ :

Իղձն ունեցած է նաեւ տեսնել մեր մէջ բազմարուեստեան հաստատութիւն մը , ուր կարողանար գործադրել իր ծրագիրն եւ օգտակար հանդիսանալ իւրայիններուն : Իւր այս մտադրութեանց գոհացումն տալու համար հետամուտ է այժմ իր յատուկ սալօնն ունենալ Բարիզի մէջ , ուր պիտի ցուցադրէ անշուշտ գլխաւորաբար արեւելեան զարդանկարչական արտադրութիւններ : Սրտագին յաջողութիւն կը մաղթենք հայ արուեստագէտին այս պատուաբեր ձեռնարկին :

Թ. ՊԵՐՃ







(Euvre des Ecoles d'Orient).

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ